

Բնչպէս եւ անու՛մ դու: Աստուած է հարցնողը: Դու կը պատասխանես: «Այո, եւ սարսափելի յանցաւոր եմ: Բնչ անեմ: Դարձիր առ Տէր Յիսուս: Նա է Փրկիչը, Նրա արիւնը մաքրում է ամէն մեղքից: Նրան զիմիր, Նա կողնէ, և կը մաքրէ և կը փրկէ և կը նորոգէ, քեզ իր նմանութեան համեմատ: Միայն Նա է կարող այդ բանն անել: Եւ իր մօտ եկողին Նա դուրս չի ձգում:»

Առաքեալը Եփեսոսի հաւատացեալներին ամէն զառնութիւն և բարկութիւն և աղաղակ և հայհոյութիւն մի կողմ ձգել յորդորելուց յետոյ՝ աւելացնում է. «Լեբոսի ընդ միջանոցս, գլխաւոր, շնորհելի միջանոց, որովք և Աստուած Քրիստոսի շնորհեաց մեզ (Եփ. Կ. 32): Այսպէս է զուտ քրիստոնէութեան էութիւնը: Բարեկէրպ եղիր դէպի քո ընկերը, եթէ դու նրան մեղանշելիս էլ աննետս, այո՛, եթէ մինչև անգամ մեղանշէ՛ք դէմ: Եթէ դու սրբափղ մէջ դէպի նա բարի ես, ասպ բերանով չար լինել չես կարող, որովհետև սրտի լիութիւնիցն է, որ բերանը խօսում է: Գլխաւոր եղիր դէպի քո ընկերը, երբ նա մեղանշում է: Յիշիր, որ նրան կարեւորութիւն է հարկաւոր և օգնութիւն, քանի որ նա կորստեան ճանապարհի վրայ է: Ազատիր մեռնողներին, օգնիր թշուառներին» — սա է սիրոյ նշանաբանը: Այս տեսակ սիրով մարդ իր շուրջն ամէն կերպ օրհնութիւններ է սփռում, այս տեսակ սիրով մարդ խաղաղութիւն է ձգում, և երանելի են խաղաղարարները, «զի նքա որդիք Աստուծոյ կոչեցին» (Մատթ. Ե. 9). այս տեսակ սիրով մարդ Աստուծոյ և Յիսուսին փառաւորում է. այս տեսակ սիրոյ վրայ հանգչում է Աստուծոյ հաճութիւնը, որից հաւատացեալն ինքը պիտի հնձէ առատ վարձ և անպատմելի օրհնութիւններ:

Ով Յիսուս լցրու մեզ Գո սիրովը՝ Գո սուրբ Հոգու միջոցով, ամէն:

Թարգ. Մ.

### ԼՍԵՅԷՔԻ ԹԻԼ ԲՆԱԳԷՏՆ ԻՆՉ Է ԱՍՈՒՄ

(Խորհրդածորութիւն Գ. 2. Բովանակութիւն—կրօնի մասին):



Մերնք շատ են խօսում կրօնի մասին վայր է վերոյ, երբ թէ ընադիտական տեսակէտից, բայց էլ չեն հարցնում, թէ խիական ընադէտները Բնչպէս են նայում այդ խնդրի վերայ: Յայտնի է, որ յիսուենական և վաթսուենական թուականներում իշխում էր թունդ նիւթապաշտական հոսանք, որ Փողտի և Մոլեշտի պէս ծայրայեղներէ ջանքերով էր սկսուել: Իսկ աւելի անուանի ընադէտները այն հոսանքի մէջ չմտան, դրեթէ ամէնքը կրօնի և քրիստոնէութեան հարազատ զաւակ գոյով: Բայց երբ որ եօթանասուն թուականներում Գարուինի վարդապետութիւնն աւելի և աւելի տարածուեցաւ և Հէկէլը քարոզում էր իւր լոնկոմաւուրը (նիւթի և ուղւոյ միաւորութիւն, մենատարբութիւն), նախկին վերաբերմունքն այնպէս փոխուեցաւ, որ ընադէտներէ նորագոյն ժամանակներէ դիւրն առ կրօնը առ նուազը պիտի կուչնք չեզոքութիւն կամ անտարբերութիւն: Այդպիսի մարդիկ ընադիտութիւնն ու մահաճական (ինդուլտիւ) մեթոդը այն աստիճան կենտրոն են դարձրել իրանց մտածողութեան մէջ, որ մարդկային կենաց միւս բաժինները անհոգ և անփոթ պիտի թողնէին:

Եթէ այդպիսի ընախոյններից հարցնենք իրանց կրօնական տեսակէտը, նոքա իրանց կը կոչեն «Աննոտիկեան», որով հասկացնում են, թէ իրանք ոչինչ չգիտեն կրօնական խնդիրներից կամ առհասարակ ընադիտութեան շրջանին չպատկանող հարցասիրութիւններից. իսկ ոմանք նաև կաւելացնեն, թէ ընական պատճառականութիւնից դուրս՝ ակադեմի է բան դիտենալ: Մի 10—20 տարի առաջ ընադէտներից շատերը այդպէս էին մտածում, եթէ ուղղակի թշնամի ևս չէին հանդիսանում հաւատոյ դէմ: Այս երևոյթը բացատրվում է առ հասարակ ընադիտութեան և մասնաւորապէս դարուխականութեան հզորագոյն դարգայմամբ: Յիշեալ ընադէտներից շատերի աչքում ընադիտութեան արդիւնքը այն աստիճան անձեռնմխելի ճշմարտութիւն էր թուում, որ հաւատում էին, թէ մօտ է ժամանակը, երբ ամենայն կեանքն ու մեղ շրջապատող բոլոր խորհուրդները՝ կատարելապէս պարզ, պայծառ և յայտնի պիտի դառնան ընախողին: Այս ուղղութեամբ շատ հեշտ կերպով չափազանցութեան պիտի հասնէին ընադիտութեան մեթոդի արժէքը: Եւ իրօք շատերի աչքում այդ էր միակ ճանապարհ՝ ճշմարտութիւնը ճանաչելու համար:



Սակայն երկնքից աստղեր չեն քաղվում. այս գէպբումն էլ խիութիւնը շուտով երևան եկաւ: Մանաւանդ դարու ինսականութեան վերաբերութեամբ սկսուեցաւ խոհական զգաստութիւնը, այնպէս որ նոյն իսկ սեպհական բանակում անեղծանելի կարծած պատնէշը խախտուեցաւ, և որովհետեւ նորա ամբուսթիւնը երևակայական էր, պէտք է հարկաւ վերջ ի վերջոյ փլուէր: Դեռ դարձեալ շարունակվում է այս կազմալուծութիւնը, և երեւի թէ բուն «երգութեալ» դարու ինսականները կաներուութեանն ուր դարի մէջ, բացի այն «հնէրից», որոնք շրջուել են Հէկէլի և Վայսմանի շուրջը: Այս հանգամանքն ի հարկէ առանց ազդեցութեան չի մնացել բնագէտներին փիլիսոփայական և կրօնական դադափարներին վերայ: Հիմա շատերն սկսել են աւելի համբերատար լինել կրօնական խնդիրներում, որոշակի խոստովանելով, թէ կրօնն ու բնագիտութիւնը երկու զատ շրջաններ են, այսինքն թէ ուսումնական և կրօնական ծանօթութեանց ազբիւրները գլխովին տարբեր բաներ են:

Այս ազդեցութիւններով այժմեան «Ազնոստիկեանութիւնը» բոլորովին փոխել է իւր կերպարանքը, նա ոչ միայն ճշմարտապէս խոստովանում է, թէ բնագիտական ծանօթութիւններն ու բնագիտութեան մեթոդը անպէտք են կրօնական շրջանում գործ դնելու համար, այլ և այժմ աւելացնում է, ո՞վ դիտէ, կարելի է թէ կրօնական ճշմարտութիւններ իմանալու համար կան այլ ճանապարհներ, և այսպիսի հնարաւորութեան գէժ աշխատում է բռնել անաշտ և արդարամիտ զիբը:

Արդ, այս կարգի մարդկանց շարքումն է նախ և առաջ Գ. Բոմանէսը՝ անգլիական կենսաբանը: Նա ծնուել է 1848 թ. Վանադայում, բարեկամ էր Գարուինի որը նորան կտակով թողել է մի շարք չհրատարակուած ձեռագիրներ, որոնցից Բոմանէսը մի քանիսն ի լոյս բնծայեց: Բոմանէսն ինքն ևս մի քանի շարադրութիւններ է գրել դարու ինսական ուղղութեամբ՝ միշտ միեւնոյն ժամանակ դարու ինսականութիւնը քննելով (ընդգէժ Հէկէլի և Վայսմանի), և վախճանուեցաւ 1894-ին 46 տարեկան հասակում:

Բոմանէսն իւր անձամբ պատկերացնում է այն յատուկ դարգացումը, որ յայտնապէս երևեցաւ վերջին տասնեակներում, թէ ինչ բնթացքով են բարեփոխուել բնախուզութեան յարաբերութիւններն աւերածը: Ի մանկութենէ բարեպաշտ հաւատով մնուած, Գարուինի հոսանքի ներգործութեամբ նա յանկարծ դարձաւ կատարեալ սկեպտիկ և անհաւատ, բայց յետոյ կրկին բաց արաւ աչքը և մեռաւ որպէս հաւատացող բրիտանեայ: Այս կրօնական դարգացման բոլոր աստիճանները ար-

տափայլում են նորա մի քանի կրօնական-փիլիսոփայական գրուածքներում: Այդ երկերից վերջինը հանգուցեալը չկարողացաւ լրացնել և հրատարակել, այլ թողեց միայն հատ ու կտոր յուշիկեր, որ նորա մահուանից յետոյ Անգլիայում հրատարակեց նորա բարեկամ Վանտնիկոս Գորէ՝ եօթը կրկնած արագրութիւններով: 1899-ին նոյնը թարգմանուեցաւ գերմաներէն, որից այժմ ստորև առաջ ենք բերում հայերէն քաղուածքը:

1873-ին 25 տարեկան հասակում Բոմանէսը գրել է «Անկողմնակալ քննութիւն աստուածաւանութեան» \* ֆիլիկոս կեղծ ստորագրութեամբ, ուր լիովին ժխտում է Աստուծոյ գոյութիւնը, բայց վշտացած խոստովանելով, թէ այդ եզրակացութեամբ իւր սրտի վիայութեան մէջ աշխարհքը կորցնում է «ըբանչելի հոգի և կենդանութիւն»: Այդ ճառի մէջ երկու բան աչքի է ընկնում. նախ այն հաւատը, թէ կայ միայն մի մեթոդ և այն է բնագիտութեան մեթոդը, երկրորդ՝ մեծագոյն վստահութեամբ ստուղաթօսութիւնը, որ օրեմն բոլորովին անփիճելի պիտի համարուի: Հետոյհետէ Բոմանէսը երկու կողմով էլ մեղմացաւ:

Մահուանից մի տարի առաջ նա սկսեց իւր յուշիկներով պատրաստել նիւթեր իւր իսկ «անկողնակալ քննութիւնը» հերքելու համար, որ մտազիր էր դարձեալ ֆիլիկոս կեղծ անունով ստորագրել, ինչպէս ստորև քաղուածքից կիմանանք. բայց յուշիկներին տետրակի շապկից երևում է, որ նոր շարագրութիւնը պէտք է կրէր հետեւեալ վերնագիրն և ստորագրութիւնը. «Անկողմնակալ քննութիւն կրօնի—Մետաֆիզիկոսի»:

Արդ, բարեպաշտ հաւատացողին որչափ որ չգոհացնէ հետեւեալ յուշիկների այս կամ այն կտորը, դարձեալ անկարելի է մեծապէս չգնահատել մի բնգունակ և քաղմակողմանի դարգացած խիստ անաշտ՝ գուհ Ազնոսիկեանի սրտի անկեղծութիւնը: Բոմանէսը խօսում է ոչ իբրև մի «որոշ» դաւանութեան անդամ, այլ որպէս մի ճշմարտասէր բնագէտ:—

Այժմ առաջ բերենք Բոմանէսի յուշիկներից քաղուածքներ.

\* \* \*

Նախաբան. Հատ տարի առաջ մի փոքր տետր հրատարակեցի այս վերնագրով. «Անկողմնակալ քննութիւն աստուածաւանութեան—Ֆիլիկոսի»: Այն ժամանակ գրքոյկը կարողացաւ հասարակութեան ուշագրութիւնը լղբուել, որ մինչև այսօր ևս տևում է, բայց և այնպէս հե-

\* Աստուածդաւանութիւն—Թ՝ Կ Ի զ մ ու ռ :

դինակն ուլ լինիլը միշտ ծածուկ մնաց: Եթէ հարաւոր է: այս անգամ ևս հուզենայի ծածուկ մնալ. ստիպյն որպէս զի երևայ: Թէ ինչ փոփոխութիւններ է կրել հեղինակը: դարձեալ ցանկութիւն ունիմ մի և նոյն կեղծ անուամբ հրատարակել նաև այժմեան խորհրդածութիւններս:

Ծածուկ մնալուս նպատակն այն է: որ գրողիս պատճառաբանութիւնները իրենց ներքին արժէքի համեմատ կշռադատուին: և ոչ թէ ընթերցողը նախապաշարմամբ կարգայ: Եթէ զիտեանայ հեղինակի նպատաւոր կամ աննպատակ ամբար:

Հիմա յայանի պիտի երևայ: որ նախկին տետրակի բացասական եզրակացութիւնները՝ աւելի խորը քննութեան ենթարկելուց և աւելի հասունանալուց յետոյ՝ փոփոխուել են:

Բայց ի հարկէ՛ նոր չեն իմ վարդապետած մտքերը. մանաւանդ որ այսօր հաղիւ թէ հնար լինի կրօնի մասին այնպիսի կարծիք յայտնելու: որ ուրիշներն արդէն ասած չլինին: Այնու ամենայնիւ շատ բան կայ անելու: որ նոյն իսկ յայանի մտքերը շարունակ բարգաւաճին: խնդիրն այլ անակտեաներից քննուելով: բազմակողմանի ուսումնասիրուելով: շիտթ զազափարները կարգի բերուելով: որպէս զի այդ ամէնը նորանոր բեղմնաւոր բաղադրութիւններով յորինուի: ինչպէս որ ես ամենայն խղճով ջանացել եմ կատարելու:

Հարկաւոր եմ համարում այս ևս աւելացնել: «Անկողմնակալ քննութիւն» հրատարակելուց յետոյ մինչև այսօր: ինչ փոփոխութիւններ որ կրել են իմ կարծիքները: ամէնքը ծագում են ոչ միայն զգուշաւոր զուտ տրամաբանական խորհողութիւնից: այլ և կենաց աւելի հասուն փորձառութիւնների անշնամբ կամ կիտով չափի դիտակցած աղքեցութիւններից: որոնք զրծուար թէ ջոկ ջոկ որոշուին: Հաղուագիւտ բան է: որ հեղինակները տային իրանց համար ու հաշիւ: Թէ՛ որ չափով փորձառութիւնը ներդարձել է իրանց արամաբանական մտածողութեան վերայ: Թէպէտ ամենայն օր կարելի է նկատել հասակի աղքեցութիւնը հողու վերայ: որով առաջուայ դատողութիւնները նոր գրոշմ և կերպարանք են առնում:

Այսպիսի փոփոխութիւններ կարելի է նկատել մանաւանդ մարդկային խորհողութեան այն բաժիններում: որոնք շատ նուրբ և փափուկ գործով: հուաբարանական կոպիտ քայլերով առաջին շարժում: և այդպէս են մանաւանդ բնականցութիւնն ու կրօնը: Քանի որ մենք աւելի վերնագաւառներն ենք բարձրանում իրական հասատուն հիմքերից: այնքան աւելի պէտք է զուշանանք վերացական մտածութեան համարձակ թռչներից: մերկ բանավարութիւններով

խոյանալուց: հետևապէս այնքան աւելի պէտք է վարժուինք զործնական իմաստութեան: մեծ հաւատ չընծայելով սոսկ իմացական խորհրդածութիւններին. իսկ այս վարժութիւնը կարելի է ձեռք բերել միմիայն ներհմուտ փորձառութեամբ:

Երբ որ այժմ նորից մտածում եմ իմ նախկին շարադրութեան մասին: «Անկողմնակալ քննութեան» մասին: ամենայն պարզութեամբ նկատում եմ մէջը երկու գայթակղիչ սխալներ: Առաջինն այն էր: որ ես՝ այնչափ բարձր վերացականութիւններում՝ անխոհեմութեամբ խիտ մեծ վստահութիւն էի ընծայել լոկ իմացական եզրակացութիւններին. Եթէ մինչև անգամ նոքա բղիթ լինին առողջ նախադրեալներից: Երբէք չպիտի մոռանայի: որ կան նաև ուրիշ կարևոր նախադրեալներ: Երկրորդ սխալս այն էր: որ իմ քննադատութեան հիմքերը: այսինքն նոյն նախադրեալների զօրութիւնը: փորձով ևս չէի հետազօտել ըստ արժանւոյն:

Իժուար թէ մի մարդ դանուի: որ ինձանից աւելի բարեխղճութեամբ փոյթ ունենար դուս իմացականութեան կանոնադրութեան և զգուշաւորութեան համար: այն ևս երևի թէ այն պատճառով: որ ես իմ կեանքը միշտ նուիրել եմ բնադիտութեան:

Բայց ես չեմ զգացել: թէ որչափ հակասական ենթադրութիւններ եմ արել Աստուծոյ մասին պատճառաբանութիւններ կառուցանելիս. իբր թէ Աստուծոյ գոյութիւնը կարող է դառնալ սոսկ բնադիտութեան խնդիր: որ պիտի լուծուի միայն իմացականութեամբ: և ուրեմն իբր թէ էլ հարկաւոր չէ ի հաշիւ առնել մարդկային միւս և աւելի բարձրագոյն բնութանութիւնները: Քնադիտական եզրակացութիւններն անպէտք են աստուածագաւանութիւնը հետազօտելու համար: Աստուած մարդու մէջ կարող է յայտնուել այլ միջոցներով: քան լոկ բնադիտական եզրակացութիւններով:

Իսկ աւելի ծանրալիւս է երկրորդ կէտը: որ գրեթէ Երբէք ուշադրութեան չի առնվում: Երբ որ ես գրում էի «Անկողմնակալ քննութիւն»: ինձ այնպէս էր թուում: որ աստուածագաւանութեան խնդիրը պէտք է լուծուի բնական պատճառներով: Քանի որ մարդու իմացականութիւնը բնական սահմաններից դուրս չի կարող շարժուել: հետախուզութեան առջև այդպիսի սահման դժելը՝ սխալ չպիտի համարուի. բայց իմ տեսութեան սխալն այն էր: որ այլ ևս հետամուտ չէի լինում: թէ հողևոր իբրև բացարելու համար՝ արդեօք հարկաւոր չէ՞ բարձրագոյն պատճառների հետազօտութիւն. կամ ուրիշ խօսքով: արդեօք նախէակը առնուազը նոյնչափ բարձր հանգամանք չպիտի լինի: որչափ

որ բարձր է մարդկային անխրատը իմացականութիւնն ու հողին ուրեմն արդեօք աւելի բարձր չէ՞, քան որ և է լոկ միլիական կամ մեկնական գոյութիւն: Եւ որովհետեւ կրօնը սահմանուած է մարդուս ամբողջութեան համար, և ոչ թէ միայն նորա իմացականութեան համար, հետեւագլէս Աստուած խնդրելու և դանելու համար՝ կարելի է թէ հարկ համարուի դործածել մարդու բոլոր ընդունակութիւնները, մանաւանդ առաւելագլէս սրտի շարժումներն ու այնպիսի յատուկ ներհմտութիւնները, որոնք իմացականութիւնից այն կողմն են: Աւրեմն ճշմարտասէրը միշտ պատաստ պէտք է լինի ամէն տեսակ ապացոյցներին կշիռ տալու:

Պատահականութիւն (կատուգալիտէտ)։ Մենք միշտ կարծում ենք, թէ մի երևութի բացատրութիւն ենք ստանում, եթէ յաջողեցնում ենք իմանալ նորա պատճառը: Բայց իսկպէս մենք ընկզմում ենք դադանելների դադանելի մէջ, որովհետեւ աշխարհիս մէջ աւելի դարմանալի բան չկայ, քան պատճառականութիւնը, բան այն ընդհանրագոյն իրողութիւնը, որ ամէն երևութի մէջ պատճառ է կոչվում: Թէ ամենայն կատարուող բան մի պատճառ պէտք է ունենայ, թէ պատճառները իրանց ներգործութեանց համեմատ՝ միշտ աւելի կամ պակաս ազդու պիտի լինին, որով տեղեղբերի բոլոր երևոյթները իրանց բացատրութիւնն են ստանում: Ինչպէս զոր օր, արեգակնային զրուութեան շարժումները տարածութեան մէջ ձևանում են մի քանի պատճառների ներգործութեամբ: որոնք մարդկային նիւթական շրջահայեցողութեան սահմաններից այն կողմն են հաստատուած, նմանագլէս և մենք որ անողնաշար կազմութիւնների սեբունդներից ենք ծաղում, գոյացել ենք բերուող միլիոն բլիջներին միաւորութիւններից, որոնցից իւրաքանչիւրը դարձեալ բերուող միլիոն յատուկ պատճառներ են ունեցել:—Թէ այս ամէնը իբօք կատարուել և կատարվում է, ահա այս է իսկպէս ամենադարմանալի իրողութիւնը մեր գարմանայի աշխարհում:

Բայց որովհետեւ այս իրողութիւնը մեզ համար խիստ սոյոգրական բան է, մենք այն աստիճան մոռանում ենք պատճառականութեան հըբաշքը, որ միամտաբար կարծում ենք, թէ էլ ոչինչ գաղանիք չկայ պատճառի մէջ: Սահայն փոքր ինչ իմաստասիրութիւնը մեզ ցոյց կու տայ, որ պատճառականութեան մասին մեր ունեցած բոլոր ծանօթութիւնը բղխում է մեր անձնական ներգործականութիւնից, ուր որ մենք ինքներս մի գործի պատճառ ենք հանդիսանում: Եթէ ես չգիտենամ, թէ իմ կամբով կարող եմ կամ աջ և կամ ձախ կողմը շարժուել, ես երբէք դադարիւր չեմ ունենայ, թէ ինչ է նշանակում մի երևութի

պատճառ: Իսկ այնպէս է թուում, որ հոգեբանական վերլուծութեան արդիւնքներից ոչ մէկն այնպէս հաստատուն չէ, ինչպէս այս հանգամանքը:

Վրկնում եմ, եթէ մեր սեպհական կամբի շարժումները չլինէին, մենք երբէք չէինք զիտենայ, թէ պատճառականութիւնը ընութեան ամենաընդհանուր իրողութիւնն է: Իսկ եթէ մեր գործերի պատճառը մեր կամքն է, ապա ուրեմն ընութեան երևոյթների պատճառը նոյնպէս որ և է կամբից պէտք է բղխի: Այս բանի դէմ չեն կարող առարկել ոչ ընագիտութիւնը և ոչ մարդկային փիլիսոփայութիւնը: Ապա եթէ այս այսպէս է և եթէ ընութեան մէջ կամքը միշտ միտիական և ամփոփախ հաստատուած է գործում և ոչ թէ մարդկային կամբի պէս քմահանութեամբ, այսօր այսպէս, վաղը այլպէս, այն ժամանակ ընական պատճառականութեան մէջ յայտնուող ներգործութիւնները պէտք է մեզ թուին միմեայիս կատարուող, և ոչ թէ բանական կամբից բղխող: Եւ իբօք աշխարհը իւր հաստատուն ընական օրէնքներով՝ մեզ թուում է իբր մի մեծ մեքենայութիւն, մինչդեռ մեր կամքը մարդկային փոփոխամտութեամբ է արտայայտվում:

Հապա ինչից է ծաղում ընագիտութեան և կրօնի հակառակութիւնը: Պարզ այն հանգամանքից, որ երկուսն էլ միշտ մի սխալ ենթադրութեամբ են առաջ տանում իրանց վէճերը, վերցրեցէք միջից այդ ենթադրութիւնը, և վէճը կը վերջանայ, Երկուսի ենթադրութիւնը կամ հիմնական դաւանանքն այն է, թէ եթէ կայ Աստուած, նա անմիջապէս չի մտանկցում րևական պատճառականութեան մէջ, այլ նորա անմիջական ներգործութիւնը (նախախնամութեան մատը) յայտնվում է միայն գիտական բաներում: Նորա մասին այն դադարիւրն է կազմուել, իբր թէ որպէս Սկիզբ և Առաջին պատճառ ամենայն արարչութեան, նա էլ ուրիշ ոչ մի առնչութիւն չունի երկրորդական պատճառների մէջ՝ քան այն, որ հէնց սկզբից տեղեղբը հաստատել է իբրև ընական պատճառականութեան մի մեծ մեքենայութիւն, որ շարժուի անխափախ ընական օրինք:

Եթէ մեր նախապաշարումներն ու զգացման աղբմունքները մի կողմը թողնենք և զուտ իմացականութեան շաղղով ընթանանք՝ մինչև տրամաբանական ծայրագոյն հետեւութիւնները, այն ժամանակ ինքնին կը հասնենք այս եզրակացութիւններին. 1) Եթէ կայ Աստուած, ապա ոչ մի հիմք չկայ, թէ ինչո՞ւ նորա գորութիւնը ընակաւոր (իմանենա) չպէտք է լինի ընութեան մէջ, այնինքն թէ ինչու ամենայն (ուրեմն և երկրորդական) պատճառականութիւն չպէտք է լինի նորա կամբի անփոփոխ արտայայտութիւն. 2)

բոլոր ապացոյցները երևում է որ ամենայն հասանականութեամբ Աստուծոյ դորութիւնը բնութեան ընտելութիւն է. 3) եթէ այս այսպէս է և եթէ նորա կամքը հետեւողական է, ապա ուրեմն ամենայն պատճառականութիւն պէտք է հարկաւ թուի իբրև մեքենայական երևոյթ. 4) եթէ հաստատում է, թէ մի իր ընտելան պատճառների արդիւնք է, այդ ծանօթութիւնը մի այնպիսի ապացոյց չէ, որ ժխտելու նոյն իրի աստուածային ծագումը:

Այդ բոլորի մասին արգէն համառօտակի ակնարկել եմ, բայց պէտք է ցոյց տամ, որ Կ-ը դործնականապէս ամէնից աւելի ծանրակշիռ է: Ասան զի բնագիտութեան և կրօնի վէճերում գարմանալի կերպով, միշտ երկուստեք ենթադրուել է: Ընտելեայն կամ յակննէ յանուանէ, թէ այն ամենայն երևոյթ, որ ընտելան պատճառով բացատրուի, այլ ևս ուղղակի Աստուծուն չպիտի վերադրուի: Երկուստեք միշտ անվիճելի են համարել ընտելանի և գերբնականի դանազանութիւնը, որով իսկ իրանց կախիւնների ասպարէզ է բացուել: Կրօնի բոլոր պարտութիւնները այս անգ պէտք է զննուել: Երբեմն այս սխալն ըմբռնել են, բայց ոչ միշտ: զոր օր, եղել է ժամանակ, երբ որ հոգեւորականները ժխտել են երկրագնաց շարժումը, երկրագնացի հնութիւնը, տեսակների ծագումը բարեփոխութեամբ: Այ ի՞նչ ցոյց տուել ըստ ամենայնի այդ մտորութեան վնասն ու խրատը: Ես ուզում եմ փորձել այդ բանը: Խօսք չկայ, որ տրամաբանական առաւելութիւնը կրօնի կողմն է, և ինքը կրօնն է մեղաւոր: Եթէ վախճանական յաղթութիւն չի ստացել, ոչ միայն ընտելութեան դէմ, այլ առ հասարակ ամէն կարգի մտաւոր բանավարդապետութեան դէմ: Սովորութեան ազդեցութիւնը և առողջ երեւակայութեան պահպանութիւնը շատ անգամ նոյն իսկ բնագիտութեան մէջ ծնանում է բանավարդապետութիւն: Այս ցաւը դարմանելու համար պէտք է մի անգամ ընդ միշտ լաւ լուսաբանել թէ յորում է ընտելան պատճառականութեան էութիւնը:

Նոյն իսկ ամենաուղղադաւանը կատարելալ կերպով չի ըմբռնում կրօնագիտութեան այս թերի մասը: Կարծես թէ Աստուծուն զլանում են շնորհն իւր ստեղծած աշխարհը, ընտելանը՝ գերբնականից զատելով և պատճառական մեքենայութեան ներքոյ գնելով: Զոր օր, դժուարանում են ասել, թէ քրիստոնէութիւնը ընտելան կերպով է անել նախկին կրօններից, կամ թէ նոյնը ընտելան կերպով է տարածուել աշխարհի ծագերում, կամ թէ Պաւղոսը ընտելան կերպով է դարձել քրիստոնէութեան և այլն: Միշտ երկու կողմից պնդել են, թէ որպէս զի մի երևոյթ աստուածային հա-

մարուի, պէտք է շատ ու քիչ անբացատրելի լինի կամ հրաշալի:

Բնագիտութեան և կրօնի վէճը միշտ այն է եղել, թէ արդեօք այս կամ այն երևութի պատճառը «բնական» է, թէ «գերբնական»: Զոր օր, ընտելութեան և Ս. Գրոց մէջ եղած հակառակութիւնը պատուում է այն խոստովանութեան շուրջը, թէ շնչումը «գերբնական» է: Թող մի անգամ ասուի, թէ «բնական» է, և վէճի շարժառիթը կը վերանայ:

Ես խոր համոզուած եմ, որ անհաւատութիւնը, անաստուածութիւնը այդ բանի վերայ է հիմնում իւր դատը:

Բնականի և գերբնականի խտրութիւնը ամենահին ժամանակի նախապաշարումն է եղել, և պատմական ժամանակներումն էլ շարունակուել է, որովհետեւ մարդս միշտ մի անորոշ զգացում է ունեցել, թէ Աստուծոյ ներգործութիւնը անձուակի խորհրդաւոր պիտի լինի, և թէ հետևապէս կրօնի շրջանը գերզգայական և ընդանցական է: Եւ յերաւի ճշմարիտ է, թէ սահմանաւորը չի կարող ըմբռնել անսահմանութիւնը, ուրեմն այն զգացումը արամաբանօրէն անտեղի չէ: Սակայն այդ զգացման ազդեցութեամբ մարդիկ սխալ կերպով եղբարացնում են, իբր թէ մի երևոյթ լիովին մեկնուած պիտի համարուի, եթէ բացատրվում է ընտելան պատճառականութեան արտայայտութիւններով, բայց այն չեն ուզում տեսնել, թէ այդպիսի բացատրութեամբ ընտել չի վարատվում վախճանական պատճառի կամ պատճառների նախապատճառի մթութիւնը, որ բուն ինքնութիւն է: Հերքեթա Սպենսէրի պէս փիլիսոփայ մարդն ասում է, թէ համայն ընտելան պատճառականութիւնը վերջիվերջոյ անբացատրելի առեղծուած է:

Զուր են կարծում, իբր թէ բնագիտութեան յառաջադիմութիւնները պէտք է խախտէին կրօնը, ընդհակառակն իսկապէս շատ և շատ դորացրել են, որովհետեւ ապացոյցին ընտելան պատճառականութեան համանմանութիւնը: Խօսք չկայ, թէ ինչ որ առաջ «գերբնական» էր համարվում, նոյնանից շատ բան այժմ ընտելան շրջանի մէջ է դրուել, որ հետզհետէ աւելի ևս պիտի ընդարձակուի: Եթէ տգէտներն այս բանը համարեն թշնամութիւն կրօնի դէմ՝ մենք պէտք է հակառակը պնդենք, որովհետեւ հետզհետէ վերանում է «բնականի» և «գերբնականի» տարբերութիւնը ամենայն ինչ մի Աստուծոյ դործ ճանաչուելով:

Ար այդ տարբերութեան զաղախաբը այնպէս երկար ժամանակ տիրապետեց, բացատրվում է սովորութեան ընդարձակ իշխանութեամբ, որի ճշման ներքոյ միաբը թմբբում է կամ մեռած է մնում: Այլ որ երկար ժամանակ զբաղվում է «բնական պատճառներով» (բնագիտութեամբ),

անդգուշարար աւելի ևս գերի է գառնում սովորութեան և կորցնում է բանական կերպով գատելու վարժութիւնը: Պարզ է: որ այսպիսի մարդը այլ ևս ընդունակութիւն չի ունենում խելացի կերպով զբաղուելու մարդկային մեծամեծ խնդիրներով: Նա մանրանում է:

Աստուածգաւանութեան համար այլ ևս խորհուրդ չունի «բնականի» և «գերբնականի» գանազանութիւնը: Ընդհակառակ այսուհետեւ պէտք է դաւանել, թէ ամենայն պատճառականութիւն լիկ աստուածային կամքի ներգործութիւն է: Այսուհետեւ պէտք է գանազանել ոչ թէ «բնականը» «գերբնականից» այլ բացատրելին անբացատրելուց: կամ տեղեկական պատճառականութիւններում մեր դիտողութեան մտաշելի եղածը՝ միւս մտայն: որ անմատչելի է մեր գիտողութեան:

Բնագիտութիւնը սահմանափակուած է մարդկային գիտողութեան չափով: ուրեմն մերձատր բնական պատճառականութեամբ, այս սահմանից դուրս նա կարող չէ ոչինչ բացատրել: Նա երբէք հնարաւորութիւն չի ունենայ որ և է իր կամ երևութի գոյութեան վախճանական հիմքը ծանուցանել:

Եթէ իմ պատճառականութեան դէմ առարկեն, թէ ես գերբնականը և հոգևորը ձևացնում եմ բնական կամ նիւթական կերպով: ահա իմ կարծ պատասխանը. փոքր ինչ խոր մտածելով, կարելի է նաև հակառակը հաստատել—այսինքն, թէ բնականը պատկերացրեցի գերբնական կերպով, կամ թէ նիւթականը հոգևորացուցի:

ՀԱՒԱՏ. Կրօնական «հաւատք» դանազան է ոչ միայն «կարծիքից» (այսինքն միայն իմացականութեան վերայ հաստատած հաւատից) այն բանով, որ մի յատուկ հոգևոր տարր ևս աւելի ունի իւր մէջ, որից զուրկ է կարծիքը, այլ նա զանազան է նաև ստի զգացմունքներից բղխող հաւատից այն բանով, որ իրան միշտ գործակցում է կամքը ամենանուսնուհուն կերպով: Աւրեմն հաւատոյ գաղափարի մէջ բովանդակած են մարդկային հոգու բոլոր կողմերը—իմացականութիւն, սիրտ և կամք: Մենք հաւատում ենք՝ բարեշքը-Չութեան վարդապետութեան միայն իմացական հիմունքներով, մենք հաւատում ենք՝ մեր ծնողների, դաւանների և այլոց սիրոյն՝ դրեթէ լոկ միայն հոգևոր պատճառներով, այսինքն սրտի ազդմունքներով: որոնք կարօտ չեն ոչ մտքի և ոչ կամքի զրգման: բայց ոչ օք չի կարող Աստուած կամ «Բրիստոս հաւատալ» առանց կենդանի դործոց, առանց ջանքերի, առանց լուրջ կամքի:

Պէտք է նկատել, որ մենք ասում ենք «կամք» և ոչ թէ լոկ «ցանկալութիւն»: Հատ մարդիկ կան, որոնք «ցանկանում են» քրիստոնէայ լինել խիտութեամբ: բայց նոցա ցանկալութիւնը օյժ չունի որ

քրիստոնէութեան պահանջած զոհարելութիւնները յանձն աւնել տայ: Այս զոհարելութիւնների մէջ ամէնից ծանր է թուում մեզ, որ խոնարհեցնենք մեր իմացականութիւնը: Նոս ևրիպ ժամանակ վարժուած էի իմ իմացականութիւնը համարել ճշմարտութեան միակ դատաւոր, և թէ պէտ իմացականութեանն ընդդէմ չէր լինի, որ սրտիս և կամքիս գաշնակցութեամբ՝ ինքն էլ նոցա հետ Աստուած ինդրեն: Աստուած վնասուն (վասն զի կրօնը մարդու համայն ասրողութեան համար է), բայց և այնպէս ևս խիտ նախանձախնդիր էի իմ իմացականութեանն համար, և զուսում էի կամքս դործ ածել այն ուղղութեամբ որով սիրտս առաւելապէս սրանայ էր ձգտում:

Ասմքի այսօրինակ ազդեցութիւնը հաւատի վերայ, նոյն իսկ աշխարհական հանգամանքներում, այնքան աւելի նշմարելի է գառնում, որ մէջը խառնվում են մեր անձնական՝ անխտիր նիւթական կամ մտաւորական՝ շահերը: Այդպիսի գործերում մենք տեսնում ենք, որ հանգամանքները կուսակցական ակնոցով այնպէս գունաւորվում են, որ մարդս զոհում է իւր իմացականութիւնը կամքին, սովորութեան, շահերին և ուրիշ յարարելութիւններին, և այսպէս է վարվում երկրի թէ առաջին նախարարը և թէ վերջին շինականը, այսինքն շատ կուրօրէն:

Վարելի է թէ այս ամէնը քաղաքականութեան մէջ և ուրիշ աշխարհական իրերում վասնգաւոր և ասիստալու բան լինի, բայց սի կարող է պնդել, թէ կրօնական հաւատի վերաբերութեամբ նոյնը չպէտք է լինի ճիշտ այնպէս: ինչպէս որ է: Եթէ հանդերձեալ կենաց խնդիրը չուղենանք առանց այլեայլութեան ժխտել և անփոյթ հանգստանալ, ապա հարկաւ պէտք է ի կշիռ առնենք, արդեօք մենք այս աշխարհում վործութեան վիճակի մէջ չենք ապրում, և ուրեմն արդեօք չպէտք է քննենք մարդկային այսօրուայ վիճակը, որպէս զի վաղուանը բարեք անօրինակ իսկ այդ դէպքում մենք պէտք է քննենք ոչ միայն մեր եմացականութիւնը, այլ թերևս աւելի ևս մարդկային հոգու միւս կողմը: որ հաւատոյ գործերում ամենակարևորն է: Չմոռանանք մանուսանդ, որ նոյն իսկ քաղաքականութեան մէջ մարդկային բնաւորութեան առաւելապէս բարոյական և հոգևոր տարբերն են վախճանական յարթութիւն ասնողները, և ոչ թէ լոկ իմացական ընդունակութիւնները:

Մանուսանդ աշխարհական շահերի գործերում երևում է, թէ ինչպէս անդետակցաբար կամքն ամենամեծ դեր է կատարում այս կամ այն բանը հաւատացնել տալու համար: Իսկապէս առնելով, իմացականութիւնը բնաւ այնքան օյժ չունի որ միակ առաջնորդ հանգիսանայ դատողութեան:

թեան մէջ, ճշմարտութիւն ինտաւելուն մէջ, ինչպէս որ առհասարակ կարծում ենք: Ընդհակառակ մարդու դատողութիւնը այն աստիճան կաշկանդուում է սոյնորութեան պատահականութիւններէն, նորոտիւթիւնից, նախապաշարումից, քմաց համմատ անհմութիւնից և այլ բաներից, որ իմաստնադոյն ինքնուրուին անգամ չպիտի կարողանայ պարզ պատկերացնել հոգեկան բարդ գործողութիւնները: որով վերջնականապէս որոշվում է մարդու հաւանութիւնը կամ չհաւանութիւնը իւր քուէն տալու ժամանակ: Արպէս զի ցոյց տրուի թէ միայն իմացականութիւնը որչափ քիչ ազդեցութիւն է ունենում կրօնական հաւատի մէջ, օրինակ բերելը մատեմատիկոսներին, որոնք մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչներն են զուս իմացական զօրութեան ասպարեղում: Տիեզերական պատմութեան մէջ հանդիսացած մեծագոյն մատեմատիկոսներէն՝ Ապպելըն ու Նիւտոնը քրիստոնէայ էին, իսկ Լա-Պլասը անհաւատ էր: Բայց դանք մեր ժամանակին, երբ որ ես Ամբրիջումն էի, այն ժամանակ մատեմատիկական Ֆալուլտետում մի այնպէս պայծառ լոյս ճառագայթեց, որի նմանք առաջ չէր պատահել: Աւելի զարմանալին այն էր, որ հէնց հռչակաւոր անունները ուղղագրականութեան կողմն էին, որք են՝ Սիբ Տոմսոն, Սիբ Հտոկ, ուտուցչապետ Տէտ, Ազամս և Ալէրի, ապա Մաքսուէլ և Վայլի, էլ չենք յիշատակում պակաս համբաւաւորներին—նոքա սովերը համոզուած քրիստոնէաներ էին: Միայն Ալիֆորդը ծայրայեղ ուղղադաւանութիւնից անաստուածութեան կողմը ոտանեց, այս օրինակը խիստ հետաքրքրական է այն տեսակէտից, թէ ինչպէս արտաքոյ կարգի հանճարամիտ մարդու վերայ կարողանում է վճռական ազդեցութիւն գործել անբնական կերպով գրգռուած բնաւորութիւնը, մի քանի ամսուայ ընթացքում, և եթէ այսպիսի մարդու սրտի մէջ քրիստոնէական հաւատոյ չէնք խախտուեցաւ, այս իրոյնութիւնը ի հարկէ չենք կարող վերադրել նորա իմացականութեան իրոյնութեան՝ այնչափ կարճ ժամանակում: Կարելի է թէ Ամբրիջից դուրս ուրիշ տեղերում մատեմատիկոսները հակառակորդ են քրիստոնէութեան: Փոյթ չէ՝ թող այդպէս լինի, բայց Ամբրիջի օրինակը արդէն բուական ապացոյց է, թէ քրիստոնէական հաւատը իմացականութեան բարձրագոյն զօրութիւններով ոչ նպաստվում է և ոչ մնասուել կարող է, այլ կախուած է ուրիշ աւելի զօրաւոր գործոններէն:

Հաւաս եւ սնանաւասութիւն. քրիստոնէութեան հակառակորդները շատ անգամ շիտթում են հաւատն ու սնանաւատութիւնը: Եւ իրօք դոքա մի հանգամանքով նման բաներ են, այն է երկուսն էլ ցոյց են տալիս մի հոգեկան վիճակի

որ հէնց հաւատ է կոչվում: Սակայն մինչդեռ քրիստոնէական հաւատի էական մասն է կազմում մի բարոյական տարր, սնանաւատութեան մէջ այդպիսի բան չկայ, նոյն իսկ մարդկային հանգամանքներում շատ տարբեր է հանդիսանում մեր հոգեկան վիճակը, եթէ հաւատ ենք ընծայում մի ուսումնական տեսութեան, կամ եթէ հաւատ ենք ընծայում մի անձի բնաւորութեան: Չանաղանութիւնն այն է, որ վերջին մէջ գանում ենք մի բարոյական տարր:

Գծուար չէ հասկանալ, թէ կախարդական հաւատով բժշկուելը և Աւետարանի հաւատը քո կեցուցին զբեղձ բնաւ նոյն բաներ չեն, ապա թէ ոչ մենք անուշադիր կը թողնէինք կախարդի և Յիսուս քրիստոսի անձնաւորութեանց տարբերութիւնը, որոնց ժողովուրդը հաւատ է ընծայում: Հաւատը չի բղիւում միմիայն առաքելական կամ գլխի ապացուցեց, որ կշռվում է իմացականութեան դատաստանով (կարծիք), այլ առաւելապէս անձնական կամ սրտի վիպարութիւնից կամ ապացուցեց, որ բացէիբաց ուրիշ կարգի դատաստան է (մտահոյսութիւն, հաւատարմութիւն): Աւրեմն կայ մի բան, որ կարող ենք կոչել հոգևոր կամ սրտի դատաստան, որ տարբեր է իմացականութեան դատաստանից, ինչպէս որ հաստատում է սրբերի կեանքը և առ հասարակ մարդկութեան մէջ կրօնական զգացման ընդհանրացած լինելը:

Հուքուէյն ասում է իւր «աշխարհական բարոյներում», թէ զիտութեան տեսակէտով հաւատը լմահացու մեղք է: Այն՝ զիւրահաւատութեան, կանխակալ կարծիքի, ունայնակրօնութեան և այնպիսիների նկատմամբ ուղիղ է այդ խօսքը, որովհետև այդ բարբ գէպքերում ոչ-ապացոյց ապացուցի տեղ է ընդունվում, թիւր եղանակներով իբր թէ ճշմարտութիւն է հաստատվում, և զիտութիւնը մեծ բարիք է շնորհել, որ լուսաբանել է կանոնաւոր ապացուցի՝ մեթոդի դադարները: Բայց այս բոլորը իմացականութեան բաժին է, Հաւատը այդ կարգի խորհրդածութեան եղանակներից դուրս է: Եւ ինչպիսի զբժոյթ կը դառնար մեր աշխարհը զիտութեան շնորհով, եթէ նորա ազդեցութեամբ մարդկային յարաբերութիւնների մէջ ևս ոչնչանար հաւատոյ ոգին: Աւրեմն Հուքուէյն էլ այն մտորուողներէն է, որոնք շիտթում են հաւատն ու կարծիքը:

Տարակոյս չկայ, որ մեր աչքում իմացականութիւնն աւելի բարձր է թուում, քան զգայական հեշտութիւնը: Այդպէս էլ մարդու բարոյական կողմը վեր ենք դասում՝ նորա իմացականութիւնից: Եւ դարձեալ հոգևոր կողմը գերազատում ենք բարոյականից: Մարդու բարոյական և աւելի ևս հոգևոր յատկութիւնները կազմում են

նորա ընաւորութիւնը կամ նկարագիրը: Բայց նկատեցէք դարմանալի իրողութիւնը. կենաց բոլոր ճանապարհներում ընաւորութիւնն է հանդիսանում ամենաէական հանգամանք:

Այդ բոլոր գաղափարները յայտնի և պարզ են. այսինքն

|            |   |                  |
|------------|---|------------------|
| Մարդս ունի | { | Հեշտութիւն:      |
|            |   | Իմացականութիւն:  |
|            |   | Բարոյականութիւն: |
|            |   | Հոգևորութիւն:    |

Բարոյականութիւնն ու հոգևորութիւնը, ինչպէս և բարուց վարդապետութիւնն ու կրօնը, բաց է ի բաց տարբեր բաներ պէտք է նկատել: Հոգևորութիւն ասելով, այս տեղ պէտք է հասկանալ սրտի և մտքի կրօնական ուղղութիւնը: Մարդու հոգևոր կողմը նորա էութեան գաղափարնակէտն է, բարձրագոյն յատկութիւնն է:

Ճշմարիտ է Բենանի ասածը, թէ միշտ կը լինին նիւթապաշտներ և հոգեպաշտներ, վասն զի մարդս միշտ կիմանայ, թէ չկայ միտք առանց ուղեղի: Սակայն միւս կողմից մարդու «ընազգումը» միշտ կը ձգտի բարձրագոյն հաւատի: Հարկաւ այսպէս էլ պէտք է լինի, եթէ կրօնը ճշմարտութիւն է, և եթէ մենք ապրում ենք մշտապէս փորձութեան աշխարհում: Արդ, միթէ հաւանական չէ, թէ նիւթապաշտական հայեցակէտը (որ փիլիսոփայութեան մէջ արդէն բանի տեղ չի գրվում) պարզապէս ըղխում է թմրած սովորութիւնից և երեւակայութեան պակասութիւնից: Ապա թէ ոչ ինչո՞վ բացատրենք այն անջնջելի ընազգումը:

Մարդուս համար աւելի հեշտ է չհաւատալը, քան հաւատալը: Չհաւատալը ծագում է շրջապատող ազդեցութիւններից և սովորութիւններից, իսկ հաւատը պահանջում է երեւակայելու զօրութեան հոգևոր վարժութիւն:

Առ հասարակ անհաւատութիւնը արմատ է բռնում անիութեան և անտարբերութեան մէջ, շատ անգամ նաև նախապաշարման մէջ, և երբէք այնպիսի բարիք չէ, որ պարծանք լինի մարդուս համար:

Ասուծոյ հաւատ. Սոկրատէսի վկայութիւնը, թէ ի ներքուստ ձայներ է լսել, փիլիսոփաներին տեղիք է տուել դանազան խորհրդածութիւններ անելու:

Շատ մեկնութիւններ են եղել, բայց հաւանականագոյնն այն է, թէ Սոկրատէսի գիտակցութեան մէջ «դէմոնը» անշուշտ մի լսողական զգայութիւն է եղել: Ըստ այսմ Սոկրատէսը պէտք է դասուի Լուիթերի, Պասկալի և նմանների կարգում, էլ չենք յիշատակում հրէից և այլ մարգարէների բազմութիւնը, որոնք միաբերան վկայում են, թէ աստուածային ձայն, աստուածային բարբառ են լսել:

Յարակցութեամբ առաջ է գալիս և միւս խնդիրը. արդեօք այդ բոլոր մարդիկ հաւատար չպէ՞տք է դրուին այն խելագարներին, որոնց կեանքում լսողութեան դառանցանքները հանապազօրեայ երևոյթ է լինում: Մեր դարաշրջանն այդպէս է դատում: Նախ՝ որովհետև սիրում է երևոյթները քիչ պատճառներով մեկնել, և երկրորդ՝ a priori (յառաջագունեկ, սոսկ իմացական և ոչ թէ փորձառութեան հիմունքներով) մերժում է յայտնութեան հնարաւորութիւնը:

Սակայն ամենեւին հիմք չկայ այդչափ կոպիտ և շտապով մեկնութիւն տալու:

Ասենք թէ ոչ միայն կրօնական հիմնադիրներն ու վերանորոգողները հոգեպէս հիւանդ են եղել, այլ և նման երևոյթները տեղի են ունեցել նաև յոյր գիտնական յայտնագործողներին՝ Գալիլէյի, Նիւտոնի, Գարուինի և այլոց կեանքում. ասենք թէ այս բոլոր մարդիկ խոստովանել են, թէ իրանց հանճարեղ մտքերն իրանց հաղորդուել են մի ներքին յայտնութեամբ՝ իբրև թէ մի խօսած լեզուով, այնպէս որ աշխարհի բոլոր գիտնական յառաջադիմութիւնը նմանել է կրօնական մտքերի յառաջադիմութեան, այսինքն կատարուել է ներշնչմամբ. — այս բոլորը ենթադրելուց յետոյ, միթէ դարձեալ կը ժխտենք ներքին յայտնութեան իրողութիւնը: Անտարակոյս պատասխանը կը լինի — «ոչ», մանաւանդ եթէ այս դէպքում կարելի է հաւատ ընծայել ոչ միայն նոցա անձնական զգացածներին, այլ եթէ այս իրողութեան առարկայական ապացոյց և հաստատութիւն են դառնում նոյն իսկ իրանց հանճարեղ ուսումնական արդիւնքները: Շատ լաւ, բայց հէնց այսպիսի վկայութիւն է հրէից մարգարէների վկայութիւնը, որով նոքա հաստատում են իրանց մարգարէութեանց ճշմարտութիւնը կամ ստութիւնը, և որ այս խօսքով է արտայայտուել. «Ի պաղոյ նոցա ծանիջիք զնոսա», յառաջագոյն խրատ ստանալուց յետոյ, թէ «Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն»: Պնդել թէ միւս մարդկանց կրօնական գիտակցութիւնը (աստուածճանաչութեան սրտի վկայութիւնը) մեզ համար ապացոյց չպիտի լինի — անմտութիւն է: Բայց մենք լով ենթադրութիւններով չենք գոհանայ, այլ պէտք է փնտռենք իրողութիւնների և իսկութիւնների ապացոյց: Եւ մենք ունինք այդպիսի a posteriori (ի յետագունեկ) ապացոյցներ, այն ևս կրկնակի — դրական և բացասական: Աւելի լաւ է սկսենք բացասականից:

Բացասական ապացոյց է ընծայում անաստուած մարդու ընութիւնը: Այսպիսի մարդու վիճակը բոս ամենայնի թշուառ է, ինչպէս որ արդէն Պասկալը նկարագրել է:

Ոմանք չեն զգում այս թշուառութեան



բուն պատճառքս բայց և այնպէս իրօք թշուառ են իրանք: Մեծ մասով մարդիկ քողարկում են այս վիճակը: աշխատելով դուարճութիւններ գանձել ընկերութեան: որսի և ամէն կարգի շնչեւութեան մէջ, կամ եթէ իմացական ընդունակութիւններ ունին՝ գիտութիւն, արուեստ, գրականութիւն են ընտրում իրանց հոգիները ցրուելու համար: Ասիական այս նշանակում է սովածին կրօնական կենսականութիւն: Ասիական սոցիալական ճանաչելի եմ գիտական հետազոտութիւններին, փիլիսոփայական խորհրդածութիւններին և գեղարուեստի վայելքների մասնորական զբօսանքը: բայց միշտ այն ևս զգացել եմ, որ թէպէտ և այդ ամէնը ընտիր բաներ են կենսաբան քաղցրացնելու համար, սակայն քաղցած մարդու համար գոբա են լսի միայն նուրբ և փափուկ շաքարիէն: Քաղցած մարդը մի առ ժամանակ կարող է ինքն իրան խաբել և հաւատալ, իր թէ ծանոյում է: բայց շուտով իւր սչքերը բացվում են և նա խմանում է, թէ ինքը ստեղծուած է ուրիշ տեսակ մոլորիկ համար, որ կարելի է թէ այնպիսի էլ համեմդ չլինի:

Հասերն այս բանը երբէք չեն ըմբռնում: բայց և այնպէս նոցա մերկութիւնը չի ծածկում ուրիշներէ աչքից. Բաւական է, որ յիշատակներ պահելու արարածներն ամենամեծ թուրութիւնը: երևի թէ աւելի վսեմ երկրաւոր ու բախտութիւն վայ, բան վկայ լինել, թէ աշխարհն ըստարժանումն դնահատում է մեզ, որ կարողացել ենք մեր խնդրելով բարձր կատարելութեան հասնել: Բայց ճշմարիտ է և այն, թէ Վատուած այնպէս է պիւր, որ վառքը ոչ օրի ծարաւը չի կտրում: Ինչպէս ուրիշ ամենայն քարոյսական, գոհացում: փառքն էլ շատ շուտ սովորական ընտելութիւն է դառնում: և հէնց որ մարդո հանում է մի առաւելութեան, խիտայ միւսի վախաբ է ստանում: Տենչանքների մէջ այնպիսի ծայր չկայ, որ որ կարողանայինք հանդուստանալ, մինչդեռ մեր լեռներից անդադար որդայթներ են լսում հեւանդութիւնն ու մահը: Սովորութիւնը մարդուն այնպէս է կուրացնում, որ նա չի նկատում իւր բուն թշուառութիւնը և չի հասկանում, թէ իրան ինչ է պակաս. բայց միշտ մի բան պակաս է լինում:

Աս անթխտելի եմ համարում, որ այս բացատրական կողմը մարդու հոգու մէջ բաց է աւելում մի գաղափարութիւն, սրովհետեւ մէջը Աստուծոյ հաւատ չկայ:

Արդ գրական կողմը: Փորձեցէք ուշ ուշով նկատել կրօնի և մասնաւոր քարձրագոյն, այն է քրիստոնէական կրօնի երանութիւնը: Հաւատը ոչ միայն վերին աստիճան զօրացնում է մարդու սիրտը, այլ և ամէնից աւելի տեսական է, միշտ

ամուս, բարդուածում է և երբէք սովորութիւնից չի բորբոսում: Պարծ, ինչպէս որ հաւատացողները միտքերուն վկայում են, հաւատը տարբերվում է ուրիշ ամենայն բախտաւորութիւնից ոչ միայն աստիճանով, այլ և էութեամբ: Այս բանն ապացայց են տալիս հաւատացողներն իրանց նախկին վիճակով, երբ որ գեռ ևս հաւատ չեն ունեցել: Հաւատը ոչ ինչ աւելութիւն չունի իմացականութիւնից ծագող արամազրութեան հետ: նա միահատակ և անճամբմատ բան է:

Այս է հաւատի նշանակութիւնը անհատի համար: Բայց գրական ապացայցն այս չափով չի վերջանում: Հիմա նկատեցէք նաև քրիստոնէական հաւատոյ ներդրածութիւնները մարդկային ընկերութեան վերայ— քրիստոնէայ անճաւորութիւնների միջնորդութեամբ՝ ընտանիքի վերայ, իսկ քրիստոնէական եկեղեցու միջնորդութեամբ՝ ամբողջ աշխարհի վերայ:

Այս բոլորը ցոյց է տալիս, որ քրիստոնէութիւնը պաշտածում է մարդկային բոլոր բարձրագոյն պահանջներին: Այդպիսի պահանջներ, շատ ու քիչ չափով, ամենայն մարդ կողմայ իւր մէջ, նայելով թէ ո՞ր չափով զարգացած է իւր բարձրագոյն բնութիւնը, բարոյական և հոգևոր կողմից: Իսկ կրօնների մէջ միայն քրիստոնէութիւնը կարող է այդ պահանջներին բաւականութիւն տալ, այն ևս ամենախառաբեալ կերպով, ինչպէս որ վկայում են այդպիսի վկայութիւն տալու կոչուածները: Այդ սրբակիրն մարդկի ամենայն ազանդներից, ամենայն ազգերից, ամենայն դասակարգերից՝ միաձայն հաստատում են նոյն բանը անճանական փորձով, այնպէս որ այս հանգամանքը ոչ մի տարակոյտ չի վերցնի: Թերևս կու մնայ հարցնելու, արդեօր դաքա ամէնքը չեն խորուել . . .

Համեմատեցէք հետևեալ երկու պատկերները:

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| Պեանքն անշահ է.   | Պեանքը կարծ է.    |
| Փոքր ինչ սիրելի.  | Փոքր ինչ յոյսեր.  |
| Փոքր ինչ առիթ.    | Փոքր ինչ երազ.    |
| Պերջը... Ողջ լեր: | Եւ... Վնաս բարով: |

Այդ աները կարծ և ճիշդ կերպով նկարագրում են այս կենսաբան— առանց յուսոյ հանդերձեալի մասին: Պարնի է դոհացնել: — Ասիական քրիստոնէական հաւատը բոլորովին ուրիշ պատկեր է ընծայում.

- Պիշերը բերս աչեր ունի.
- Իսկ ցերեկը միայն մեկ.
- Բայց կը հանգչի երկրիս ճրագը.
- Եթէ արեգը մայր մանի.
- Հոգին հաղար աչեր ունի.

Արտի մէջ կայ մեայն մի սէք:  
Բայց պայծառ չէ համայն կեանքը,  
Եթէ սէքը լոյս չի անում:

Այո՛, այսպէս է սէքը: Ազատ ու բնամ որչափ  
փառաստուր և հոյակապ է քրիստոնէութիւնը, սե-  
բոյ կրօնը, որ մարդու որտի մէջ հաւատ է կանգ-  
նեցնում, թէ կայ վսեմագոյն սիրոյ Աննազընը  
և թէ Աստուած սիրում է մարդուն յաւիտենա-  
կան սիրով:

Ս. Մ.



ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

(ՐՍՏ ԿԱՆՏ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ)

Մարդիկ ստորարար հետաքրքրում են առ-  
օրեայ փոքրիկ հարցերով և շատ քիչ անդամ են  
մտածում կեանքի բովանդակութեան, նպատակի և  
մարդու նշանակութեան մասին: Բայց լինում են  
այնպիսի բազմեր, որ մարդս ակամայ իրան հարց  
է տալիս՝ այնպէս են սպրում, արդեօք, մարդիկ,  
ինչպէս որ հարկն է. մի՞թէ՛ բացի հանապաօրեայ  
հոգսերից, կարիքներից, սերտութիւններից և վշտե-  
րից գոյութիւն չունի՞ մարդու համար ու է աւելի  
բարձր, վսեմ նպատակ, որին հասնելու ձգտէր նա:

Այո, այդ տեսակ նպատակ գոյութիւն ունի.  
ոմանք զգում են այդ սյարդ, և ոմանք մութ կեր-  
պով: Պէտք է այդ մասին հողայ մարդ, որպէս զի  
իր կենաց ճանապարհն անցնի լաւ, շիտակ, իսկական  
չաւրով, որով եթէ գնալու լինի, չի հեռանայ բա-  
րուց և լոյսից, այլ բնդհակառակը՝ կրճատեանայ ա-  
նոնց: Բացի առօրեայ չնչին նպատակներից, մարդս  
պէտք է ունենայ նաև մի բարձրագոյն նպատակակէտ.  
այդ տեսակ նպատակակէտին ձգտելը միմկայն կա-  
րող է մարդկային կեանքին ու դորժունէութեան  
բովանդակութիւն տալ. այլպէս՝ անհասկանալի  
կմնան մեզ մեր անթիւ—անհամար ձգտումները,  
հոգսերը և մտածումները: Ինչի՞ համար մարդս գէս  
ու դէն է ընկնում, ինչի՞ համար է նա իւր կեանքի  
ընթացքում հողին ու միտքը լարում գրութեան  
մէջ պահում. մի՞թէ՛ լակ հանապաօրեայ հացի հա-  
մար: Բայց չէ՛ որ՝ «ոչ մկայն հացիւ կեցցէ՛ մարդ»,  
և հողիդ էլ չես կարող հացով կշտացնել: Արեմն  
ինչի՞ համար:

Այսպիսի խորհրի ժամանակ մարդ զգում է,  
որ խարխափում է խաւարի մէջ, տանջում է հողե-  
պէս կեանքին թերի գիտակ լինելու սրտաճառով,  
«Մի ուղեցոյց ասող է փնտրում, որ իր առջև  
փռուած ճանապարհը լուսաւորէ: Կեանքը նման է

ձողին, մեք լարանում ենք՝ անձայր ծովի երեսին.—  
հեռուն խաւար, ճանապարհը անյայտ, ամեն կողմից  
և ամեն լողէ տպաւնում են մեզ ծանծաղունները  
և ստորջրեայ ժայռերը: Արպէսպի չմտորուններ սոյ  
անասմանութեան մէջ, ջրապայտաների մէջ չրնկը-  
մեք, չգարնուենք ժայռերին, մեք պէտք է լա  
ճանաչենք շիտակ ճանապարհը և կարողանանք մեր  
նաև ուղիւ ծանծաղունների և ստորջրեայ ժայ-  
ռերի միջով: Պէտք է որ՝ առաջնիւ լուսաւորէ փա-  
րոսը և իր լուսով զգուշացնէ մեզ վատեղութիւն  
զուրկութիւններից:

Կեանքը շրջապատում է մարդուն հազար ու  
մի տեսակ կեղծ պատրանքներով, որոնք շատ ան-  
գամ ստիպում են մարդուն ի վստառ հանկու մի  
կտոր հացի համար իր սրբութիւնները. միւս կող-  
մից՝ կեանքը տպաւնում է նրան մատնել սովի,  
զրկանքների, հիւանդութեանց, առանձնութեան...  
Փորձանքների և սարսափների, շողորրութեանց և  
տարակուսանաց մէջ մարդս կամայ—ակամայ ըն-  
կնում է կրքերի, հակասութեանց, կասկածասութեան  
ցանցերի մէջ, որոնք անկատելի կերպով նրա ոտն  
ու ձեռք շղթայում են. նա այս—այն կողմն է  
ընկնում, շոշափելով է ման գալիս, վայր է ընկնում  
և վերջապէս այլ ևս չէ կարողանում հասկանալ թէ՛  
նրան է լոյսը, նրան է լուսաւորը, նրան է բարին  
նրան է չարը:

Մարտիկիլ է՝ մարդուն խարխափել իր տե-  
րող կեանքի ընթացքում խաւարի մէջ: Ի դուր չէ,  
որ հին ժամանակներում իրար հարց էին տալիս՝  
«Ի՞նչպէս սպրել, ո՞ր գնալու: Ի՞նչպէս չէ, որ ի հնուց  
անախ իմաստունները և հասարակ մահկանացուները  
աշխատում էին գտնել կեանքի իսկական ճանապար-  
հը և անչեղ դնալ նրանով՝ ցոյց տալով խաւարում  
խարխափողներին ճանապարհը: Հռչակաւոր գերմա-  
նացի փիլիսոփայ Կանտ (ծն. 1724, վախճ. 1804-ին)  
քիչ ջանք չէ գործ դրել լուծելու կեանքի հանգոյցը:  
Նա կենսական խնդիրներ է լուծել այդ տաղանդա-  
ւոր մտածողը, բայց բարձրագոյն շարքայական ճշ-  
մարտութեան վերաբերակ հարցը, այսինքն այն, թէ՛  
ինչպէս սկսք է ապրէ, զգայ և ինչպիսի կենսական  
չաւրով սկսւ ընթանայ՝ մարդ, որ իսկական մարդ  
լինի, աշխարհաստեղծ փիլիսոփայի ամենակարևոր և  
լուրջ մտածութեան աւարկան է եղել համարեա իր  
ամբողջ կեանքի ընթացքում:

Ըստ Կանտի, մարդ կարող է լինել կրթուած,  
գիտուն, շատ բան հասկացող, ամեն ինչի մասին  
լաւ գատողութիւն ասող, բայց և միևնոյն ժամանակ  
շատ հեռու իսկական բարոյական ճշմարտութիւնից:  
Ինչպէս երկիւնքը երկրից:

Մարդու խելքը կարող է հատուանալ և սրուել,  
բայց միևնոյն ժամանակ նրա հոգեկան կեանքի սր-  
մատում բուն դրամ մնալ կողմիս եասարթութիւնը:  
Այս վիճակի մէջ է գտնուում, ըստ Կանտի, ներկայ